

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶԱԶՈՒՌԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ
ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

21 հունիս 2013 թվական

գ. Զաջուռ

Համաձայն ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 190-Ա հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում 2012 թվականի վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի» և ի կատարումն ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի մայիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զաջուռի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 43 կարգադրության, աշխատանքային խումբը մասնակցությամբ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Կառլեն Աբրահամյանի (խմբի ղեկավար), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի գլխավոր մասնագետ Սուրեն Ավետիսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Զարիկ Մուրադյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Լյուվա Հակոբյանի (խմբի անդամ), Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ Հայկ Սարգսյանի (խմբի անդամ), ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Զաջուռի համայնքի ղեկավար Սուրառ Սուվարյանի Զաջուռի համայնքում կատարել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2013 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական հսկողությունն սկսվել է 2013 թվականի հունիսի 3-ին և ավարտվել՝ 2013 թվականի հունիսի 14-ին:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

1) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն համայնքի ավագանին 2012 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 23-Ն որոշմամբ ընդունել է իր կանոնակարգը: